Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 269 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԺՊՏՈՒՆ ԱՏԱՄՆԵՐ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է մասնագիտացված շրջող ատամնաբուժական ծառայությունների անհատույց մատուցում դպրոցահասակ երեխաներին (7-15 տարեկան), Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Սեպտեմբերից մինչև մայիս ավտոբուսը շրջում է Երևանի դպրոցներով, իսկ ամռան ամիսներին՝ Հանրապետության տարածքով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	1. «Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերության» ոչ առևտրային կազմակերպություն (հասցեն՝ Գլենդել, Կալիֆոռնիա 91209-2074, ԱՄՆ): 2. «ՓԱՐՈՍ» հիմնադրամ 9/8 (հասցեն՝ Պարկեր փողոց Ա-14 Բերքլի, Կալիֆոռնիա 94710 ԱՄՆ):
4.	Ծրագիրը կատարողը	«Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերության հայկական մասնաճյուղ», ՀՀ ք. Երևան, Եզնիկ Կողբացի 67, ՀՎՀՀ՝ 02553123
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության ողջ տարածք: Ծրագիրն առնչվում է առողջապահական բնագավառին
6.	Ծրագրի բյուջեն	35,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության դպրոցահասակ երեխաները (7-15 տարեկան)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	16 ապրիլի 2022 - 16 ապրիլի 2025
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ատամնաբուժական սարքավորումների, գործիքների, պարագաների և նյութերի ներմուծում՝ 20,000,000 դրամ, 16 ապրիլի 2022 թ. - 16 ապրիլի 2025 թ.: 2. Եվս մեկ ավտոբուսի ներմուծում՝ 8,000,000 դրամ, 16 ապրիլի 2022 թ. - 16 ապրիլի 2025 թ. (ծրագրի ավարտից հետո շահագործվելու է հետագա՝ նմանատիպ ատամնաբուժական ծրագրերի շրջանակներում, բացառապես բարեգործական նպատակներով): 3. Ատամի խնամքի պարագաների ներմուծում՝ 5,000,000 դրամ, 16 ապրիլի 2022 թ. - 16 ապրիլի 2025 թ.: 4. Կազմակերպական այլ չնախատեսված ծախսեր՝ 2,000,000 դրամ, 16 ապրիլի 2022 թ. - 16 ապրիլի 2025 թ.:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Ատամնաբուժական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռք բերում՝ 20,000,000 դրամ. 2. ատամի խնամքի պարագաների (ատամի խոզանակ, մածուկ և ատամի թելեր) ներմուծում՝ 5,000,000 դրամ. 3. ավտոբուսի ներմուծում՝ 8,000,000 դրամ. 4. չնախատեսված ծախսեր՝ 2,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր՝ 2,000,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ առողջապահության, ՀՀ գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, ինչպես նաև մարզպետարանների և համայնքային ծառայությունների հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերության», «ՓԱՐՈՍ» հիմնադրամի հոգեբարձուների խորհուրդներին պարբերաբար ներկայացվելու է հաշվետվություն, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ